Արձանագրություն N 3

«ՎԱՇՎՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

*ք. Երևան*

30.04.2019 թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ — Արթուր Մկրտչյան

Հանձնաժողովի անդամներ՝

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչության պետ — Վլադիմիր Թամրազյան

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի իրավական ապահովման և փաստաթղթաշրջանառության վարչության պետ — Սուրեն Պետրոսյան

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի իրազեկման, հաղորդակցության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ — Խաժակ Թոմոյան

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչության մասնագետ բնական գիտությունների բնագավառի — Սամվել Մելումյան

Հանձնաժողովի քարտուղար՝

վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ — Ռոզա Ասատրյան

Օրակարգում՝

1. Գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցին որոշելու մասին

---

Ընդունել ի գիտություն, որ.

"Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ հարցման մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է համապատասխան տեղեկատվություն:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԻնֆոԹեքնոլոջի»ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

---

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ԻնֆոԹեքնոլոջի»ՍՊԸ-ի մասով համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ինռթեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերում անհամապատասխանություններ առկա չեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.3 Հանձնաժողովը որոշեց մասնակից «Ինռթեքնոլոջի» ՍՊԸ-ի մասնակցության հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Ինռթեքնոլոջի» ՍՊԸ-ին որպես բավարար գնահատված հայտ և ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. Պայմանագիր կնքելու որոշման մասին

2.1 Մասնակցի հետ համապատասխան չափաբաժնի մասով կնքել պայմանագիր անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

| Հանձնաժողովի | | | |
|---|---|---|---|
| Նախագահ՝ | Արթուր Մկրտչյան | ԳՊ ԳԱԳ | |
| Անդամներ՝ | Վլադիմիր Թամրազյան | ԳՊ ԳԱ | |
| | Սուրեն Պետրոսյան | ԳՊ ԳԱ | |
| | Խաժակ Թոմյան | ԳՊ ԲԱ | |
| | Սամվել Մերուժանյան | ԳՊ ԲԱ | |
| Քարտուղար՝ | Ռոզա Աստոյան | ԳՊ ՄՀՄ | |